ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԿԱՆԱՉՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Р ЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКИЙ МАРЗ
ГЮХАПЕТАРАН КАНАЧУТА

№ 024/76
30/08/2019թ.

գ.Կանաչուտ
հեռ.060687777

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Գ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Կանաչուտ համայնքի ավագանու 2019 թվականի թիվ 6 նիստի թիվ 24 որոշման կրկնօրինակը:

Առդիր՝ 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՈՒԱՐԴ ԲԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, 098460002 kanachutgp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ **2019**թվականի **N** 24

ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԵՐՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով համայնքների միավորման գործընթացը, այլ համայնքների հետ Արարատի մարզի Կանաչուտ համայնքի միավորման նպատակահարմարության հարցը, արտահայտելով համայնքի բնակչության դիրքորոշումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի **13**-րդ հոդվածի **11**-րդ մասի պահանջներով

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնքի բնակչությանը ուղղված ուղերձ՝ համաձայն **N1** հավելվածի:

2. Ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարությանը ուղղված ուղերձ՝ համաձայն **N2** հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹԻԿ

ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒԴԵՔՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՃԱՌՈՒԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՇԱՀԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ.ԱՍԱՏՐՅԱՆ**

Հավելված N 1

Կանաչուտ համայնքի ավագանու
21.08.2019 թ. N24 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

ՈՒՂԵՐՁ

Կանաչուտ համայնքի հարգելի բնակիչներ, Կանաչուտ համայնքի ավագանին քննարկելով համայնքների միավորման գործընթացը, հաշվի առնելով Կանաչուտ համայնքի բնակչության շրջանում տիրող գերակա տրամադրությունը այլ համայնքներ հետ Կանաչուտ համայնքի միավորման գործընթացի նկատմամբ,

Կանաչուտ համայնքի ավագանին արտահայտելով իր կանխորոշիչ դիքորոշումը, հայտարարում է, որ դեմ է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախաձեռնած համայնքների միավորման գործընթացին, պատրաստակամ է առարկայական քննարկումներ անցկացնել միավորման մանրամասների վերաբերյալ՝ ներգրավելով համայնքի բնակչությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ.ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված N 2

Կանաչուտ համայնքի ավագանու
21. 08. 2019 թ. N24 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

ՈՒՂԵՐՁ

Արարատի մարզի Կանաչուտ համայնքի ավագանին, որպես ներկայացուցչական մարմին, քննության առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախաձեռնված համայնքների միավորման գործընթացը, հաշվի առնելով այդ գործընթացի նկատմամբ համայնքի բնակչության կարծիքի որոշիչ նշանակությունը,

Հայաստանի Հանրապետության կառավարությանը կոչ ենք անում նախապես սահմանել համայնքների միավորման մասին համայնքային քննարկումների ընթացակարգ՝ ապահովելով թափանցիկություն և ներառականություն,

Համայնքի միավորման վերաբերյալ պետք է անցկացնել տեղական հանրաքվե, որն այլընտրանք չունի:

Համայնքի ավագանին ակնկալում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը կլսի համայնքի կարծիքը համայնքների միավորման գործընթացի մասով, կապահովի Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 190-րդ հոդվածով սահմանված համայնքների լսված լինելու իրավունքի իրացումը՝ գործընթացը շարունակելու դեպքում պարտադիր անցկացնելով տեղական հանրաքվե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍՍԱՏՐՅԱՆ